ԿՐԹԱԿԱՆ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

***Ուսուցիչների կարիերայի առաջխաղացմանն աջակցելու նպատակով՝ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը շարունակում է ուսուցչների մասնագիտական զարգացման համակարգի վերանայման գործընթացը, որը ենթադրում է ուսուցչի մասնագիտական զարգացման սխեմայի կատարելագործում եւ բարելավում՝ ուսուցիչների առավելագույն ներգրավվածությամբ:***

Այդ նպատակով, նախարարության նախաձեռնությամբ, կարեւոր փոփոխություններ ու նորամուծություններ են մտցվել ուսուցչի մասնագիտական զարգացման եւ կարիերայի առաջխաղացման սխեմայում: Ըստ փոփոխությունների՝ ուսուցչի կարգավիճակ շնորհելու սխեմայում սահմանվել են տարբեր պայմաններ: Մասնավորապես.

* առաջատար /մենտոր կարգավիճակ կշնորհվի ընդհանուր ունակությունների քննության արդյունքների եւ պորտֆոլիոյի (տարվա ընթացքում կատարած աշխատանքների հանրագումարում) գնահատման հիման վրա,

* ավագին, ով ունակությունների քննությանը հաղթահարել է մենտորի կարգավիճակ ստանալու նշագիծը, հնարավորություն է տրվում, պորտֆոլիոյի գնահատականը ներկայացնել մենտորի կամ առաջատարի կարգավիճակի համար,

* դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք, որոնք առարկայի քննությունից առնվազն 7 կրեդիտ միավոր ստանալով ձեռք են բերել ավագի կարգավիճակ կամ Ազգային ուսումնական պլանով նախատեսված առարկայի /առարկաների խմբի դոկտորությամբ, ազատվում են կարգավիճակը բարձրացնելու ընդհանուր ունակությունների քննությունից եւ կգնահատվեն միայն պորտֆոլիոյի հիման վրա,

Նորամուծությունները վերաբերում են հայոց լեզվի եւ արդբեջաներենի ուսուցիչներին: Փոփոխությունները նախատեսում են տարբեր հարցեր. այն ուսուցիչները, որոնք առարկայական իրավասությունը հաստատել են 10 կրեդիտով՝ կստատան ավագ ուսուցչի կարգավիճակ, գործող ուսուցչների (պրակտիկոս) կարգավիճակը կպահպանվի մինչեւ 2025-2026 ուսումնական տարվա ավարտը:

Կարեւոր նորամուծություններ կան հատուկ ուսուցչի կարիերայի առաջխաղացումը խթանելու առումով: Մասնավորապես, ըստ փոփոխությունների.

* հատուկ ուսուցչի կարգավիճակի ցանկին ավելացվել է մենտորի կարգավիճակը,

* փոխվել են հատուկ ուսուցչի՝ առաջատար եւ մենտոր կարգավիճակ ստանալու եղանակները. կարգավիճակը կարելի է ձեռք բերել հատուկ ուսուցիչ դառնալ ցանկացողների մասնագիտական ունակությունների քննությունը հանձնելու եւ պորտֆոլիոյի գնահատման հիման վրա,

* առաջատարի կարգավիճակ ստանալու քննությունը կանցկացվի 2023 թվականին, իսկ մենտորինը՝ 2024 թվականին,

* հատուկ ուսուցիչներ, ովքեր աշխատում են մտավոր եւ ընկալման խանգարումներով, բազմակի խանգարումներով, զգայական խանգարումներ ունեցող աշակերտների հետ, կանցնեն հատուկ հավաստագրման դասընթաց:

*Խորագիրը պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

# ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը սահմանել է 2023-2024 ուսումնական տարվա առաջին դասարանցիների գրանցման պայմանները:***




I փուլ - Գրանցման առաջին փուլում՝ 2023 թվականի մարտի 6-ից մինչեւ մարտի 20-ը, դպրոցներում կգրանցվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները: Առաջին փուլում գրանցման ենթակա երեխաների ծնողները պետք է դիմեն ցանկալի հանրակրթական դպրոց: Դպրոցի տնօրինությունը երեխային կգրանցի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (EMIS): Կրթության առանձնահատուկ կարիքը հաստատելու համար՝ ծնողը դպրոցում լրացնում է համապատասխան դիմում-հայտը, որից հետո բազմամասնագիտական թիմը կգնահատի երեխային եւ կորոշի նրա կրթական կարիքը: Կրթության առանձնահատուկ կարիքների հաստատման դեպքում՝ դպրոցը համապատասխան փաստաթղթերի հիման վրա կապահովի աշակերտի ընդգրկումը: Առաջին փուլում գրանցված երեխաների համար փաստաթղթերի ներկայացման եւ ընդունելության ժամկետը 2023 թվականի մարտի 21-ից մինչեւ 2023 թվականի ապրիլի 28-ն է:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հնարավորություն կունենան գրանցվել հաջորդ փուլերում:

II փուլ - Գրանցումը հնարավոր կլինի մայիսի 2-ից մինչեւ մայիսի 15-ը, եւ դպրոցում կգրանցվեն այն երեխաները, ում՝ ա) քույր-եղբայրը սովորում է իրենց ընտրած դպրոցում, բ) ծնողը/խնամակալը իր կողմից ընտրած՝ տվյալ հանրակրթական դպրոցի աշխատող է, գ) ընտանիքի երկու եւ ավելի երեխաներ միաժամանակ մտնում են առաջին դասարան: Երկրորդ փուլում հաշվառումն իրականացվում է հանրակրթական դպրոցներում՝ ծնողի/օրինական ներկայացուցչի կողմից ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման հիման վրա: Գրանցումն ապահովում է հանրակրթական դպրոցը:

III փուլ - Ընդհանուր գրանցումը կմեկնարկի մայիսի 17-ից եւ կշարունակվի մինչեւ հունիսի 9-ը: Գրանցումը կկատարվի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի՝ register.emis.ge պաշտոնական կայքում: Գրանցումն իրականացվում է ծնողի/օրինական խնամակալի կողմից: էլեկտրոնային եղանակով գրանցված աշակերտին ընդունելու համար՝ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը կիրականացվի հունիսի 13-ից հունիսի 24-ը: Նշված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում՝ գրանցումն ինքնաբերաբար կչեղարկվի:

IV փուլ - Հունիսի 28-ից՝ հուլիսի 12-ը դպրոցներում կիրականացվի: Այս փուլում այն աշակերտները, ովքեր չեն գրանցվել I, II եւ III փուլերում, կամ ովքեր ցանկանում են փոխել գրանցումը, կգրանցվեն թափուր մնացած կամ նախորդ փուլերում ազատված տեղերում: Չորրորդ փուլում հանրակրթական դպրոցն աշակերտի գրանցումն ապահովում է ծնողի/օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

Նախարարությունը հորդորում է ծնողներին ուշադիր ծանոթանալ գրանցման պայմաններին, որպեսզի կարողանան ժամանակին եւ սահուն իրենց երեխային ընդունել դպրոց:

ԹԱՏՐՈՆ

# ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԹԱՏՐՈՆ. ՄԱՐՏԻ 20-ԻՆ՝ ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆԻ «ՌԵՎԻԶՈՐ», ԻՍԿ ՄԱՐՏԻ 21-ԻՆ՝ ՌՈԲԵՐՏ ՍՏՈՒՐՈՒԱՅԻ «ՇՂԹԱՅՎԱԾ ՊՐՈՄԵԹԵՎՍ» ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





Մարտի 20-ին Թբիլիսիի Ռուսթավելու անվան ազգային ակադեմիական թատրոնի բեմում Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը կներկայացնի Արմեն Բայանդուրյանի «Ռեւիզոր» բեմադրությունը՝ ըստ Նիկոլայ Գոգոլի համանուն պիեսի:

Իսկ հաջորդ օրը՝ մարտի 21-ին, ռուսթավելցիները հանդիսատեսի դատին կներկայացնեն ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբերտ Ստուրուայի «Շղթայված Պրոմեթեւս» ներկայացումը, որը Մաեստրոն բեմադրել է հին հույն ողբերգակ, այդ ժանրի հիմնադիրներից մեկի՝ էսքիլեսի համանուն պիեսի հիման վրա:

Հատկանշական է, որ ստեղծագործությունը թարգմանել է բեմադրիչ-ռեժիսորը Նինո Կոնտիձեի հետ միասին:

«Շղթայված Պրոմեթեւս» ներկայացման մեջ Ռոբերտ Ստուրուան ներգրավել է ակադեմիական թատրոնի միջին եւ երիտասարդ սերնդի դերասաններ:

ՄՇԱԿՈՒՅԹ

# «ԻԱՐՏ» ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ՄԱՐՏԻ 11-ԻՆ ԲԱՑՎԵՑ ԱՐՏՅՈՄ ԱՆԹԱՆՈՍՅԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ, ԻՍԿ ՄԱՐՏԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑԱՎ ԼԵՎՈՆ ԱԼՈՅԱՆՑԻ ՀԱՄԵՐԳԸ

***Թբիլիսիի «ԻԱրտ» հեղինակավոր պատկերասրահում մարտի 11-18-ը ներառյալ գործեց թբիլիսցի նկարիչ Արտյոմ Անթանոսյանի անհատական ցուցահանդեսը: Ներկայացվեցին 33-ամյա նկարչի ստեղծագործության մոտ վաքսուն աշխատանքներ՝ գեղանկարչություն, քանդակագործություն ու գծանկարչություն:***


Արտյոմ Անթանոսյան

Արտյոմ Անթանոսյանը մայրաքաղաքի նախկին թիվ 131 վրաց-հայկական դպրոցի, Թբիլիսիի Յ.Նիկոլաձեի անվան գեղանկարչական ուսումնարանի շրջանավարտ է: Բարձրագույն կրթությունը ստացել է Հայաստանի պետական գեղարվեստի ակադեմիայում: Ապա վերադարձել է Թբիլիսի: Արդեն տասը տարի աշխատում է Վրաստանի արվեստի պալատում: Նրա աշխատանքները պահվում են ԱՄՆ-ի, Հունաստանի, Նոր Զելանդիայի, Թուրքիայի, Ռուսաստանի մասնավոր հավաքածուներում: Արտյոմ Անթանոսյանի ոճն անսահմանափակ է՝ աբստրակցիայից մինչեւ սյուրռեալիզմ:

Երիտասարդ նկարչի առաջին անհատական ցուցահանդեսը կայացել է 2018-ին Թբիլիսիում, Վրաստանի արվեստի պալատում: Իսկ Դ.Ուզնաձե 13 հասցեում գտնվող «ԻԱրտ» պատկերասրահում, որտեղ, ի դեպ, պարբերաբար ցուցադրվում են անվանի նկարիչներ, ներկայանում էր երկրորդ անգամ: Բացման օրը ցուցահանդեսին ներկա էին թբիլիսցի անվանի նկարիչներ, Վրաստանի հայ համայնքի, ինչպես նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանատան եւ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի ներկայացուցիչներ:

Ողջունելով ներկաներին, պատկերասրահի տնօրեն Իկա Բոկուչավան մասնավորապես շեշտեց, որ Արտյոմ Անթանոսյանը դիտողի ուշադրությունը գրավում է Թբիլիսիի հետ ասոցացվող իր բաց երանգներով ու հատկապես կանաչ գույնով, ինչը խոսում է նկարչի նրբաճաշակության ու մնայուն թարմության մասին:

## ... ԵՐԿՈՒ ՕՐ ԱՆՑ ՆՈՒՅՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ՆՎԱԳԵՑ ՏԱՂԱՆԴԱՇԱՏ ԿԻԹԱՌԱՀԱՐ ԼԵՎՈՆ ԱԼՈՅԱՆՑԸ

Արտյոմ Անթանոսյանի ցուցադրվող կտավների թվում թբիլիսցի 23-ամյա կիթառահար Լեւոն Ալոյանցի դիմանկարն էր, ով անձամբ ներկա էր ցուցահանդեսի բացմանը: Հենց այդ օրը, հյուրընկալ մշակութային օջախի տնօրինության նախաձեռնությամբ որոշվեց մարտի 15-ին անցկացնել կիթառահարի համերգը:


Լեւոն Ալոյանց

*«Ես երբեք չէի պատկերացնի, որ կարելի է նայել կտավին ու նվագել եւ հակառակն, իհարկե: Շնորհակալ եմ արվեստից ստացվող հաճույքն ու բավականությունը կրկնապատկելու հնարավորության համար»,* - ասաց Լեւոնն իր համերգի սկզբում:

Համերգն ամբողջությամբ իմպրովիզ էր: Կատարումներից յուրաքանչյուրը հնչում էր պատկերասրահում փակցված կտավին համահունչ, Լեւոն Ալոյանցին հատուկ դասական ոճի մեջ՝ ֆլամենկո, եվրոպական, ֆոլկ, լատինո-ամերիկյան մեղեդիներ եւ, իհարկե Կոմիտասի սեփական մեկնաբանում:

Պատկերասրահում ներկա էին վրացի ու հայ մտավորականներ:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՔՐՈՆԻԿ ՅՈԳՆԱԾՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆԻՇ



***Վերջերս անընդհատ հոգնածություն եմ զգում: Տարիներ շարունակ նույն գործն եմ կատարում, թեեւ հոգնածության նման զգայում երբեք չեմ ունեցել: Չգիտեմ՝ ի՞նչ է կատարվում ինձ հետ, ինչպե՞ս վարվել:***
***Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ***
***Բոլնիսի***

Մեր օրերում այս ախտանիշը շատերին է ծանոթ: Դրան նպաստում են ժառանգական նախատրամադրվածությունը, նստակյաց կյանքը, երկարատեւ մտավոր եւ ֆիզիկական գերծանրաբեռնվածությունը, հոգեկան ապրումները, նյարդային եւ իմունային համակարգերի հյուծված վիճակը: Այս ախտանիշի դեպքում նկատվում է հիշողության վատթարացում, քնկոտություն, գլխացավ: Նախկինում ոչ մի դժվարություն չներկայացնող սովորական աշխատանքն անտանելի է դառնում: Լինում է մի պահ, երբ մարդը նույնիսկ դժվարանում է տարրական գործողություններ կատարել՝ հագնվել, ուտել, քայլել:

Իհարկե, պետք է դիմել բժշկի օգնությանը, որպեսզի այդ վիճակը չխորանա: Պետք է կազմակերպել բազմազան մթերքներով հագեցած ճիշտ սննդակարգ, կրճատել շաքարի եւ յուղերի քանակը, ճիշտ գնահատել ուժերը եւ ձեր առջեւ գերխնդիրներ չդնել, գործունեության մի ձեւից անցնել մեկ այլ ձեւի եւ ամեն ինչ սրտին մոտ չընդունել:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ ԱՆՈՒՆՆԵՐԸ




***Հետաքրքիր է՝ որեւէ վիճակագրություն գոյություն ունի՞ բոլորից շատ տարածված անունների վերաբերյալ: Եթե՝ այո, ապա ցանկալի կլիներ իմանալ, թե ո՞ր անուններն են ամենատարածվածը Վրաստանում ու Հայաստանում:***
***Լ.ՍԱՐԳՍՅԱՆ***
***Նինոծմինդա***

Բնականաբար, նման վիճակագրություն գոյություն ունի, եւ բավական հաճախ այդ տեղեկատվությունը տարածվում է: Օրինակ, 2022 թվականին նման հաղորդագրության մեջ նշված է, որ Վրաստանում ամենատարածված տղամարդկանց անունները Գիորգին ու Նիկան էին, ինչ վերաբերում է կանանց անուններին, ապա տասնամյակներով առաջատար համարվող Նինո անունը ետ մղվեց՝ իր տեղը զիջելով Մարիամ, Մարթա, Եվա, Բարբարե անուններին:

Վիճակագրական տվյալներով, Վրաստանում այսօր ապրում է 193 387 Գիորգի, 94 000 Դավիթ, 45 473 Ալեքսանդրե, 43 597 Լուկա, 39 131 Նիկոլոզ, 36 108 Իրակլի, 29 8988 Զուրաբ, 28 807 Սաբա, 27 716 Լեւան:

Ներկա դրությամբ, Վրաստանում Նինո անունը կրում է 115 758 կին, Մարիամ՝ 118 118, Աննա՝ 49 409, Թամար՝ 48 806, Մայա՝ 47 044, Նանա՝ 42 393, Էլենե՝ 38 619, Նաթիա՝ 38 334, Մանանա՝ 33 197:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա 2022 թվականին Հայաստանում ծնված տղաներին ամենաշատն անվանակոչել են Դավիթ: Երկրորդ տեղում՝ Նարեկ, երրորդ հորիզոնականում՝ Հայկ անուններն են: Աղջիկ երեխաներին ամենաշատն անվանակոչել են Նարե, ապա՝ Արփի եւ Մարիա:

Տղաների տարածված անունների թվին են դասվում նաեւ Մոնթե, Տիգրան, Մարկ անունները, իսկ աղջիկների շրջանում, բացի վերոնշյալից, լայն տարածում ունեն Մանե, Լյուսի, Անգելինա անունները:

ԽՈՐՀՈՒՐԴ

## ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՑՆԵԼ ԿԱՀՈՒՅՔԻ ՃԱՔԵՐԸ

***Կահույքի մակերեսին առաջացած ճաքերն աննկատ դարձնելու համար, կարելի է դրանք շփել ընկույզի միջուկով:***

Մուգ փայտը կարելի է ներկել նաեւ յոդով, այնուհետեւ՝ լաքապատել: Սակայն, գոյություն ունի եւս մի միջոց, որը շատ ավելի արդյունավետ է:

Պատրաստել 0,5-ական բաժակ քացախի եւ ձիթապտղի յուղի խառնուրդ եւ դրանով շփել կահույքի ճաքճքած մակերեսը: Նույն նպատակով կարելի է օգտագործել նաեւ ծխախոտի մոխիրը, որը պետք է ջրի հետ խառնել, թանձր մածուկ ստանալ եւ դրանով շփել վնասված մակերեսը:

Փայտը բնական նյութ է եւ սիրում է բնական միջոցներ: Այնպես որ, փայտե կահույքին ճաքեր նկատելիս՝ մի հուսահատվեք եւ դիմեք առաջարկված միջոցների օգնությանը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ ԱՅԴՔԱՆ ՋՈՒՐ, ԹԹՎԱԾԻՆ...



*Դեռեւս դպրոցից, բոլորս տեղեկացված ենք, որ երկրագնդի մեծ մասը կազմում են օվկիանոսները, իսկ մթնոլորտային օդի որոշակի մասը՝ թթվածինն է: Առաջին հայացքից այս ավելի քան պարզ հանգամանքները հանդիսանում են մեր մոլորակի ամենամեծ գաղտնիքը:*

### ՈՐՏԵՂԻ՞Ց ԱՅԴՔԱՆ ՋՈՒՐ

Ինչպես արդեն նշեցինք, ջուրը ծածկում է երկրագնդի 70 տոկոսը, եւ պատահական չէ, որ երկրագունդը կոչվում է «երկնագույն մոլորակ»: Օրինական հարց է ծագում, ինչպես ստացվեց, որ մեր մոլորակի վրա այդքան շատ ջուր կա, իսկ արեգակնային համակարգի մյուս մոլորակների վրա այն գրեթե չկա:

4,5 միլիարդ տարի առաջ երկրագունդը չոր էր ու քարքարոտ եւ, բնականաբար, կյանքի զարգացման մասին խոսք լինել անգամ չէր կարող: Գիտնականների մի մասը համոզված է, որ երկրագնդի ջուրը հայտնվել է վիթխարի աստղաների հետ պարբերական ընդհարումների ժամանակ, աստղաներ, որոնք ծածկված էին սառույցով: Այսինքն, այսօրվա ծովերը, օվկիանոսները, գետերը, որոնք մեր մոլորակի կենսահիմքն են, ոչ այլ ինչ են, քան տիեզերական ցող: Գիտնականների այդ խմբի համոզմամբ, երկրագնդի վրա ջուրը կոնդենսատ է, որը առաջացել է մոլորակի մթնոլորտի ջերմաստիճանի տատանումից:

### ՈՐՏԵՂԻ՞Ց Է ԾԱԳԵԼ ԹԹՎԱԾԻՆԸ

Երկրագնդի վրա կյանքի ձեւավորման համար, բացի մեծ ծավալի ջրի առկայությունից, անհրաժեշտ պայմաններից մեկը թթվածնով հարուստ մթնոլորտի ձեւավորումն էր: Այն ծագել է 2,4 միլիարդ տարի առաջ ցիանա բակտերիաների շնորհիվ, որոնք՝ որպես օգտագործած հումք, արտադրում էին թթվածին: Ելնելով այդ մանրէների գործունեությունից՝ երկրագնդի վրա թթվածնի մակարդակը տատանվում էր, միաժամանակ փոխվում էին նաեւ մոլորակի վրա ապրող օրգանիզմները: Մոտ 540 միլիոն տարի առաջ թթվածնի ծավալը վերջնականապես կայունացավ, եւ այդ կայունությունը շարունակվում է մինչեւ օրս:

### ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ

Այսօր էլ հնարավոր է ենթադրաբար կանխագուշակել երկրաշարժերը, թեեւ այդ կանխագուշակումներն ավելի հաճախ հիշեցնում են եղանակի տեսությունը: Բացի այդ, սեյսմիկ տեղեկատվությունը շատ ուշ է տեղ հասնում, հետեւաբար, այն նախօրոք կանխագուշակել հնարավոր չէ: Ցուցիչները գրանցում են միայն տատանումները, տեկտոնիկ շերտերի շարժումը: Ցավոք, այսօր էլ գիտնականները չեն կարող պարզաբանել, թե ինչու են երկրագնդի այս կամ այն հատվածում տեկտոնիկ շերտերը շարժվում, ընդհարվում, փշրվում, հետեւաբար, վերջնականապես կանխագուշակել երկրաշարժը հնարավոր չէ:

### ԻՍԿ Ի՞ՆՉ ԿԱ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՆԵՐՍՈՒՄ

Առաջին հայացքից թվում է, թե մենք ուսումնասիրել ենք ողջ երկրագունդը, պարզել երկրագնդի վրա գտնվող բոլոր նյութերի բաղադրությունը: Սակայն մենք ուսումնասիրել ենք միայն երկրագնդի արտաքին շերտը, մոլորակի ընդերքը ուսումնասիրված չէ, եւ դա զարմանալի չէ, քանի որ ընդերքը ծածկված է մատիայի սիլիկատային տեսակի անանցանելի շերտով: Գիտությունը մինչ օրս չի կարող պատասխանել, թե ինչ է գտնվում մոլորակի կենտրոնում, քանի որ դրան հասնել չեն կարողանում: Մինչեւ 20-րդ դարի կեսերը գիտնականները ենթադրում էին, որ երկրագնդի միջուկը կազմված է հալված նիկելից ու երկաթից: Չնայած հետո պարզվեց, որ վերոնշյալ տարիների բաղադրությունը չի համապատասխանում միջուկի խտությանը:

### ԻՆՉՊԵՍ Է ԼՈՒՍԻՆԸ ԴԱՐՁԵԼ ԵՐԿՐԱԳՆԴԻ ԱՐԲԱՆՅԱԿԸ

Մինչ օրս հստակ պատասխան չկա այն հարցին, թե Լուսինը ինչպես հայտնվեց երկրագնդի ուղեծրում: Տարածված տեսության համաձայն, Լուսինը ձեւավորվել է երկրագնդի հետ խոշոր աստղի ընդհարման արդյունքում: Այդ դեպքում Լուսինը կարող էր լինել այդ աստղի կամ երկրագնդից անջատված հատվածի մի մաս: Լուսնից բերած նմուշները ցույց տվեցին, որ երկրագնդի արբանյակի քիմիական բաղադրությունը հիշեցնում է երկնայինը: Մեկ այլ տեսության համաձայն, երկրագնդի արբանյակը ինքնուրույն մոլորակ է, որը միլիարդավոր տարիներ առաջ եկել է Տիեզերքից: Այն ձգվել է երկրի մագնիսական դաշտի կողմից եւ վերածվել երկրագնդի արբանյակի:

## Ա Ն Ե Կ Դ Ո Տ Ն Ե Ր

*☺ Աստված իմ, ի՜նչ հիմարն էի, երկրպագուների ողջ բանակ էր ետեւիցս գալիս, բոլորին մերժեցի ու քեզ ընտրեցի...*

*- Ափսո՜ս, որ այդ բանակում ես չհայտնվեցի:*

*☺ Զրուցում են երկու ծանոթ.*

*- Ո՞նց ես դիմանում կնոջդ՝ անընդհատ անտրամադիր է, անընդհատ դիտողություն է անում... Երբեւէ լինո՞ւմ է լավ տրամադրված:*

*- Աստված մի արասցե, լավ տրամադրության դեպքում՝ երգում է:*

*☺ Զրուցում են երկու ընկեր.*

*- Կնոջս համար ադամանդե մատանի եմ գնել, եւ արդեն երկու շաբաթ է՝ հետս չի խոսում:*

*- Ինչո՞ւ...*

*- Այդպես էինք պայմանավորվել:*

*☺ Կինը երկար ժամանակ խոսում է հեռախոսով:*

*- Ո՞ւմ հետ էիր խոսում:*

*- Մայրիկիս, կարծես մի փոքր գժվել է:*

*- Ուրեմն մի փոքր առողջացել է:*

*☺ Մի երեխա դրսում խաղալիս 10 լարի է գտնում ու, գալով տուն, հորն ասում է.*

*- Պապ, պապ, տես՝ Ակակի Ծերեթելու ծննդականն եմ գտել:*

*Հայրը պատասխանում է.*

*- Ա՜յ տղա, չես տեսնո՞ւմ՝ նկարով ա՝ ուրեմն պասպորտնա...*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



*Հեղինակություն ստեղծելու եւ այն ամրապնդելու համար առնվազն քսան տարի է պահանջվում: Իսկ այն կործանելու համար հինգ րոպեն էլ բավական է: Եթե դուք լրջորեն գիտակցեք դա, կատարվող աշխատանքի նկատմամբ ձեր մոտեցումներում ինչ-որ բան կփոխվի:*

***ՈՒՈՐԵՆ ԲԱՖՖԵՏ***

*Հաջողության հասնելու համար, պետք է ընդամենը երկու բան անել. հստակ որոշել, թե իրապես ինչ եք ուզում, իսկ հետո այդ ամենի համար վճարել պահանջվող գինը:*

***ԲԱՆԿԵՐ ԽԱՆՏ***

*Ես չեմ կարող սպասել, որ հաջողությունն ինքը բարեհաճի ինձ այցելել, այդ պատճառով ես անհապաղ կսկսեմ նրան ընդառաջ շարժվել:*

***ՋԻՆ ՈՒԻՆԹԵՐՍ***

*Պարտությունն անհրաժեշտ է հետագայում հաջողության հասնելու համար:*

***Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***
***ԱԽԱԼՔԱԼԱՔԻ***

# ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

*Մարտի 14-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, մամլո ասուլիսում հայտարարեց, որ Հայաստանի կառավարության գործունեության առանցքային մարտահրավերը՝ 2022 թվականի արդյունքներով շարունակում է մնալ արտաքին անվտանգության ապահովումը:*




Նրա խոսքով՝ աշխարհաքաղաքական խորացող անկայունությունը, աշխարհակարգի եւ միջազգային անվտանգության ոլորտներում ակնհայտ դարձող անորոշությունները ու լարվածությունները ավելի են սրում Հայաստանի արտաքին անվտանգության սպառնալիքները:

Նիկոլ Փաշինյանը նշեց, որ 2022 թվականը դարձել է լայնածավալ բարեփոխումների տարի:

- Կառավարությունը որդեգրել է անվտանգային մարտահրավերների պայմաններում բարեփոխումների, պետական ինստիտուտների կայացման եւ հանրապետության զարգացման օրակարգից չշեղվելու քաղաքականություն: Արդյունքում, 2022 թվականն ամփոփվել է վերջին 15 տարիների համար աննախադեպ՝ 12,6 տոկոս տնտեսական աճով,- ասաց վարչապետը:

Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց, որ 2022 թվականին պետբյուջեի հարկային եկամուտները կազմել են 1 տրիլիոն 926 միլիարդ դրամ, որը, 2017 թվականի համեմատ, ավելի է 768 միլիարդ դրամով կամ՝ 2 միլիարդ 20 միլիոն ԱՄՆ դոլարով կամ՝ 66,3 տոկոսով, իսկ 2018 թվականի համեմատ՝ 670 միլիարդ դրամով կամ՝ 1 միլիարդ 820 մլն ԱՄՆ դոլարով կամ՝ 53 տոկոսով:

Վարչապետի հավաստմամբ՝ Հայաստանի կառավարությունը շարունակում է վարել բալանսավորված եւ բալանսավորման արտաքին քաղաքականություն: - Այսուհանդերձ, չլուծված է մնում առանցքային խնդիրը՝ Հայաստանի արտաքին անվտանգության երաշխավորումը: Մեր գնահատականն այն է, որ այս հարցին մեկ քայլանոց լուծում գոյություն չունի: Այս հարցի լուծման համար անհրաժեշտ է միջազգային, տարածաշրջանային, ռազմաքաղաքական, ներքաղաքական իրադրության խորը վերլուծություն ու դրանից բխող քայլեր: Մեր խնդիրն է, ըստ այդմ, կառավարել սպառնալիքները եւ օգտագործել հնարավորությունները,- նշեց վարչապետը:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՉԵՄ ՍՏՈՐԱԳՐԻ ՄԻ ԲԱՆ, ՈՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՉԿԱՐՈՂԱՆԱՄ ՆԱՅԵԼ ՁԵՐ ԱՉՔԵՐԻՆ»

*Մարտի 14-ին անցկացված մամլո ասուլիսում՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահեցրեց, որ չի ստորագրի մի բան, որից հետո չի կարողանա նայել Հայաստանի քաղաքացիների աչքերի մեջ:*

- 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը, որ այն ժամանակ ստորագրել էի, բնականաբար ես էլ երջանիկ չէի: Նրանք, ովքեր իմ կաբինետում են եղել՝ իմ քաղաքական թիմի անդամներից, Անվտանգության խորհրդի անդամներից, նրանք գիտեն, թե ինչ պայմաններում ու ինչ վիճակում եմ ես ստորագրել: Վիճակը սթափ է եղել, ամենակարեւորը, բայց շատ ծանր, դառը: Բայց ես տեսել եմ, որ այդ թղթի իրագործմամբ ՀՀ-ն ու ԼՂ-ն կարողանում են իրենց շահերը հետապնդել: Այն ժամանակ դա կապիտուլյացիա անվանվեց, այսօր տեսնո՞ւմ եք, որ թե՛ ընդդիմության, թե՛ իշխանության ներկայացուցիչները, թե՛ իրավապաշտպաններն օրումեջ հղում են անում եռակողմ հայտարարությանը,- ասաց վարչապետը:

Վարչապետը հիշեցրեց՝ Ազգային ժողովում հայտարարություն է արել՝ ասելով, թե ինչ կստորագրի, ինչ չի ստորագրի, որին հետեւել է շատ մեծ հանրահավաք:

- Ես կստորագրե՞մ մի բան, որ հետագայում չկարողանամ ձեր աչքերի մեջ նայել. ոչ, չեմ ստորագրի,- ընդգծեց Նիկոլ Փաշինյանը՝ վստահեցնելով, որ չի ստորագրի որեւէ բան, որից հետո չկարողանա նայել Հայաստանի որեւէ քաղաքացու աչքերի մեջ:

## «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՊԿ-ԻՑ ԴՈՒՐՍ ՉԻ ԳԱԼԻՍ, ՀԱՊԿ-Ն Է ՄԵԶԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ»

*Հայաստանը հրաժարվեց ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալի իր քվոտայից:*

Մեկնաբանելով կառավարության որոշումը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնեց, որ 2022 թվականին ՀԱՊԿ նախագահը Հայաստան այցի ընթացքում իրեն ասել է, որ ՀԱՊԿ-ում մտավախություն կա, թե Հայաստանը դուրս կգա կազմակերպությունից: Վարչապետը դա տեղին չի համարել՝ փոխանցելով Հայաստանում առկա մտավախությունը, որ ՀԱՊԿ-ը դուրս կգա Հայաստանից:

Վարչապետի հավաստմամբ՝ Հայաստանը երկար ու հետեւողականորեն է աշխատել ՀԱՊԿ-ի հետ եւ շարունակում է աշխատել: Հայաստանն իր սկզբունքներն առաջարկել է.

- Խոսքն այն մասին է, թե առնվազն ՀՀ տարածքում ՀԱՊԿ-ը գործո՞ւմ է, թե ոչ, կա՞, թե չկա: Մենք ուզում ենք եւ պատրաստ ենք առերեսվել այս հարցին,- նշել է Փաշինյանը:

Հիշեցնենք, որ հունվարի սկզբին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ Հայաստանը հրաժարվել է իր տարածքում ընդունել ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի «Անխորտակելի եղբայրություն-2023» զորավարժությունները: Իսկ մարտի 10-ին հայտնի դարձավ, որ Հայաստանը, համապատասխան ընթացակարգի համաձայն, դիմել է ՀԱՊԿ՝ հրաժարվելու ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալի իր քվոտայից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳՈՒՅՔԸ ԲՌՆԱԳԱՆՁՎԵՑ

*Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումները:*

Դրանցից մեկով՝ ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջում է ՀՀ տարածքային կառավարման նախկին նախարար, ԱԺ նախկին նախագահ, ՀՀ նախկին վարչապետ Հ.Ա.-ից, նրա կնոջից, որդուց, դստրերից, փոխկապակցված այլ անձանցից՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 59 անշարժ գույք, որից 15-ը՝ Երեւան քաղաքում, մեծամասամբ Կենտրոն վարչական շրջանում, 12-ը՝ Արարատի մարզի Մխչյան համայնքում, 10-ը՝ Նարեկ համայնքում, 2-ը՝ Կոտայքի մարզ, Արզական համայնքում, 6-ը՝ Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնքում, 1-ը՝ Վայոց Ձորի մարզ, Ջերմուկ համայնքում, 1-ը՝ Գեղարքունիքի մարզ, Սեւան համայնքում, 6-ը՝ Տավուշի մարզ, Դիլիջան համայնքում, 3-ը՝ Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնքում, 1-ը՝ Արարատի մարզ, Մարմարաշեն համայնքում, 1-ը՝ Արարատի մարզ, Այնթապ համայնքում, 1-ը՝ Արարատի մարզ, Արեւաբույր համայնքում:



## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

*Մարտի 17-ին գործակարգավարական արտահերթ խորհրդակցության ժամանակ՝ Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտարարեց հրաժարականի մասին:*

- Ուզում եմ հայտնել իմ հրաժարականի մասին, միաժամանակ հայտնելով, որ շարունակելու եմ լինել քաղաքական թիմի հետ: Շարունակելու եմ աշխատել մեր պետության կայացման զարգացման ուղղությամբ,- ասաց նա:

Նա հույս հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, ի դեմս քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի, կստանա երեւանցիների վստահության քվեն եւ հնարավորություն կունենա շարունակել համայնքի համար գերակա կարեւոր ծրագրերը:

Հրաչյա Սարգսյանը քաղաքապետ էր ընտրվել 2021 թվականի դեկտեմբերի 22-ին ավագանու արտահերթ նիստում: Մինչ այդ, 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նա զբաղեցնում էր Երեւանի քաղաքապետի տեղակալի պաշտոնը:

### ԿԱՅԱՑԱՎ Ն. ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ Վ. ՊՈՒՏԻՆԻ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԸ

***Մարտի 13-ին կայացավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:***

***Հեռախոսազրույցին քննարկվել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում շարունակվող հումանիտար ճգնաժամը: Մտքեր փոխանակվեցին նաեւ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացի շուրջ:***

***Քննարկվեցին 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի, նոյեմբերի 26-ի եւ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների եռակողմ հայտարարությունների իրականացմանը վերաբերող հարցեր:***

### ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆԸ՝ ԲՐՅՈՒՍՈՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



***Լեզվաբան, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը, ով ավելի քան քսան տարի դասավանդում է Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում, նշանակվել է բուհի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար:***

***Դավիթ Գյուրջինյանի՝ այդ պաշտոնում նշանակվելը բուհի ուսանողները միանշանակ չեն ընդունել: Նրանցից շատերը, բարձրաձայնելով իրենց դժգոհությունը, դասադուլ են իրականացնում:***

### ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԱԾ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹՎՈՎ ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՈՐԴՆ Է

***Հայաստանի զբոսաշրջության կոմիտեի տվյալներով, Հայաստան այս տարվա փետրվար ամսին այցելել է 130 հազարից ավելի զբոսաշրջիկ, ինչը, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատ, լավագույն ցուցանիշն է: 2019-ի փետրվարին Հայաստան է այցելել շուրջ 96 հազար, 2020 թվականին՝ շուրջ 107 հազար, 2022 թ.՝ շուրջ 72 հազար զբոսաշրջիկ:***

***Ընդհանուր առմամբ՝ այս տարվա երկու ամսում Հայաստան է այցելել 290 հազարից ավելի զբոսաշրջիկ: Հունվար-փետրվարի ընթացքում Հայաստան զբոսաշրջային այցելությունների աճ գրանցած հինգ երկրներն են Ռուսաստանը (52 տոկոս), Վրաստանը (12 տոկոս), Իրանը (5 տոկոս), ԱՄՆ-ը (1 տոկոս) եւ Գերմանիան (1 տոկոս):***

### ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿՏԵՂԱԴՐՎԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՐՁԱՆԸ

***Երեւան քաղաքի Ֆրանսիայի հրապարակում կտեղադրվի Հայաստանի ազգային հերոս, երգիչ, երգահան, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանը:***

***Երեւան քաղաքի ավագանու հերթական նիստին «Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» նախագիծը ներկայացրեց Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը՝ հավելելով, որ հուշարձանի կրկնօրինակը տեղադրվելու է նաեւ Փարիզում:***

***Նախագծին քվեարկեց ավագանու 49 անդամ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:***

***Որոշման ընդունումից հետո կիրականացվեն հուշարձանի էսքիզային եւ ճարտարապետական նախագծերի հաստատման հետ կապված աշխատանքներ:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՐՏ



*19.03.2023 Դատավորի կիրակի*

***25.03.2023 Սուրբ Գրիգոր Լուսավորչի սոսկալի չարչարանքների ու Վիրապ մտնելու հիշատակության օր***

Հայ առաջին կաթողիկոս Սբ. Գրիգոր Լուսավորչին նվիրված երեք հիշատակության օրերից՝ տարվա մեջ առաջինն է: Ըստ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցի՝ նշվում է Մեծ պահքի 6-րդ կիրակիի նախորդ շաբաթ օրը: Տոնը կատարվում է՝ ի հիշատակություն Խոր Վիրապում Սբ. Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքների: Գրիգոր Լուսավորչի հիշատակը, իբրեւ համաքրիստոնեական սրբի, տոնում են նաեւ քրիստոնյա մյուս եկեղեցիները:

*26.03.2023 Գալստյան կիրակի*

ՆՈՐ ԳԻՐՔ

# ՎԱԼԵՐԻԱՆ ՄԱՐԿԱՐՈՎԻ ՆՈՐԱՎԵՊԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

*Մարտի 12-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում, կայացավ թբիլիսցի հեղինակ Վալերիան Մարկարովի «Այնտեղ, յոթ սարերի ետեւում» նորավեպի շնորհանդեսը:*





Կրթությամբ պատմաբան Մարկարովի վերոհիշյալ գիրքը նվիրված է Արեւմտյան Հայաստանի Տարոն գավառում թուրքական յաթաղանին զոհ դարձած հայ ընտանիքի դաժան ճակատագրին: Թվում է՝ ծանոթ թեմա է, դեպքերը՝ հարյուր հազարավոր, բայց հեղինակի կողմից կատարված ազգագրական մեծ աշխատանքը՝ ժողովրդական ավանդույթների, սովորությունների, առօրյայի, բնության ու կենցաղի գրական բարձր վարպետությամբ նկարագրությունը, անգնահատելի են դարձրել գրքի բովանդակությունը:

«Հայարտուն» կենտրոնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանի ողջույնի խոսքից հետո՝ լրագրող Եկատերինա Մինասյանը ներկայացրեց Վալերիան Մարկարովի կյանքի ուղին եւ գրական գործունեությունը:

Անչափ տպավորիչ էր Վալերիան Մարկարովի կողմից նորավեպից դրվագների ընթերցումը՝ երաժշտության, նկարների ու հեղինակի խոսքի համադրությամբ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

# ՄԱՐՏԻ 20-ԻՑ ՀԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ «A» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՏԱՔՍԻՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ Է

*Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մայրաքաղաքի կառավարության նիստում հայտարարեց, որ մարտի 20-ից կդադարեցվի հին համակարգով «A» կատեգորիայի տաքսիների թույլտվության տրամադրումը եւ ապրիլի 1-ից կիրականացվի թույլտվությունների տրամադրման այլ մոդել:*



- Ապրիլի 1-ին մեկ անգամ կտրվեն ցմահ թույլտվություններ, որոնք, թույլտվություն ունեցողները դրանք կկարողանան վաճառել, գնել, վարձակալել: Թբիլիսիի քաղաքապետարանն այլեւս թույլտվություններ չի տալիս: Այդ թույլտվությունները մնալու են քաղաքացիների մշտական սեփականությունը, հետո նրանք կորոշեն՝ շարունակե՞ն աշխատել, թույլտվությունը վարձակալությամբ տալ մեկ ուրիշի՞ն, թե՞ վաճառել,- ասաց մայրաքաղաքի քաղաքապետը:

Բացի այդ, Կախա Կալաձեն «A» կատեգորիայի տաքսիստներին հորդորեց, որ եթե մինչեւ մարտի 20-ը չդիմեն քաղաքապետարան, այլեւս ցմահ թույլտվություն չեն ստանա:

- Քանի որ թույլտվություն տալու հնարավորությունը սպառվելու է, կոչ եմ անում «A» կարգի տաքսիներ վարողներին, որոնք դեռ թույլտվություն չեն ստացել, մինչեւ մարտի 20-ը դիմել քաղաքապետարան եւ հին համակարգով «A» կարգի թույլտվություն ստանալ: Հակառակ դեպքում, նրանք ապրիլի 1-ին այլեւս ցմահ թույլտվություններ չեն ստանա,- նշեց Թբիլիսիի քաղաքապետը:

# ՎՐԱՍՏԱՆԻ 3,7 ՄԻԼԻՈՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ Է 1,6 ՄԻԼԻՈՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ

## ՎՐԱՍՏԱՆԻ ԱՄԵՆ ԵՐԿՐՈՐԴ ԲՆԱԿԻՉ ՈՒՆԻ ՄԵՔԵՆԱ

*Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով՝ 2022 թվականին գրանցված մեքենաների թիվն ավելացել է 5 տոկոսով: Ըստ տվյալների՝ ֆիզիկական անձանց պատկանում է 1,4 միլիոն տրանսպորտային միջոց, իսկ իրավաբանական անձանց՝ 163,2 հազար:*



Ընդհանուր առմամբ, Վրաստանում գրանցված է 1,33 միլիոն թեթեւ մարդատար, 111,2 հազար բեռնատար, 64,6 հազար հատուկ նշանակության մեքենա եւ 54,3 հազար ավտոբուս եւ միկրոավտոբուս:

Նշենք, որ 2024 թվականից Վրաստան արգելվում է «Եվրո-5» (էկոլոգիական չափորոշիչ, որը կարգավորում է վնասակար գազերի արտաթորումը) չափորոշչից ցածր գտնվող ավտոմեքենաների ներկրումը:

Որոշման համաձայն՝ ներկրման սահմանափակումը կառնչվի այն մեքենաներին, որոնք թողարկվել են մինչեւ 2013 թվականը:

Վրաստանի ՆԳ նախարարության տվյալներով՝ Վրաստանում գրանցված թեթեւ մարդատար ավտոմեքենաների 62,7 տոկոսը թողարկվել է ավելի քան 20 տարի առաջ: Վրաստանում երթեւեկող 639,7 հազար մարդատար ավտոմեքենաներից միայն 239,1 հազարն է թողարկվել 20 տարուց քիչ ժամանակահատվածում: Ընդ որում, այդ մեքենաների 44,8 տոկոսը թողարկվել է ավելի քան 15 տարի առաջ:

Ընդհանուր առմամբ, Վրաստանում գրանցվել է 59,4 հազար ավտոմեքենա, որոնք թողարկվել են վերջին տասը տարիների ընթացքում, ինչը կազմում է մեքենաների ընդհանուր թվի 9,2 տոկոսը:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Եկեղեցական ստորին պաշտոնյա: 8.Միջնադարում Արեւմտյան Եվրոպայում Պիրենյան թերակղզու եւ Հյուսիսային Աֆրիկայի արեւմտյան մասի մուսուլման բնակչության անվանումը: 10.Նիշ, նշանակ: 11.Շվեդ երաժիշտ ... Այ Չերի: 13.Իտալական ավտոմեքենա: 15.Աշխարհահռչակ ռեժիսոր ... Սփիլբերգ: 16.Գութանին լծվող բոլոր լուծերը գութանին միացնող շղթան: 17.Իտալացի ֆուտբոլիստ Ֆրանչեսկո ...: 19.Ետ մղել, վտարել: 23.Էթնոլոգ, ճանապարհորդ ...-Մակլայ: 26.Բացառությամբ, զատ: 27.Փաստացիորեն, դե ...: 28.Մանրահատիկ ապար: 29.Կոթող-Սահարձան Սյունիքում: 32.Անտառի խիտ՝ ստվերոտ ու մութ տեղ: 33.Չափազանց նուրբ, սպիտակ: 36.Քաղաք Սերբիայում: 37.Դյուրավառ հեղուկ: 39.Դեղնականաչավուն հեղձուցիչ գազ: 40.Վրաց ռեժիսոր, սցենարիստ ... Գելաշվիլի: 42.Ծանրության ռուսական չափ=16.3կգ: 43.Քաղաք Դաշտային Կիլիկիայում: 44.ԱՄՆ երգչուհի: 45.Գետ Ռուսաստանի եվրոպական մասում: 46.Մետաղյա ձող: 47.Ամերիկացի տիեզերագնաց ... Արմսթրոնգ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Մեջտեղում գտնվող: 2.Հավերժ: 3.Թույնի մեջ թաթախված: 4.Մտքով ընկալելի բովանդակություն: 5.Ցիրուցան, խառնիխուռն: 6.Անգլիացի գրող Ալան Ալեքսանդր ...: 9.Անհամար, բազմաթիվ: 12.Սիրուն, գեղանի: 14.Հայ ծանրորդ ... Ավետիսյան: 18.Բռնի կերպով ձեռքից վերցնող, զավթող: 20.Քաղաք Իրանում: 21.Ծովային տրանսպորտ: 22.Երկրի մակերեւույթի ջրով լցված գոգավորություն, որը կապված չէ օվկիանոսի հետ: 23.Մրգանուշ: 24.Աստվածաշնչի բաղկացուցիչ մաս: 25.Ծիծաղիր (ժող.): 30.Հապաղել, ետանալ: 31.Ճշմարիտ, հավաստի: 34.Կապան քաղաքը՝ հնում: 35.Ծլել, ծաղկել, բողբոջել: 38.Ամերիկյան նշանավոր ռեժիսոր, գրող ... Ալլեն: 41.Մեսրոպյան այբուբենի տառ:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Մուրացան: 4.Աբաշիձե: 8.Արյուն: 9.Հարավ: 10.Հլու: 12.Երթաս: 16.Ինեսա: 20.Աթանես: 22.Կարեն: 23.Դրո: 24.Մոլոր: 26.Թռչի: 30.Բաշ: 31.Ալմա: 32.Շի: 33.Բալ: 34.Տրե: 35.Երե: 37.Թալին: 39.Կարոտ: 42.Ազատ: 45.Սառա: 47.Առու: 49.Բարակ: 50.Դեկարտ: 51.Եք: 52.Դվին: 54.Ջահրա: 55.Նամ: 56.Լրիվ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Մարկես: 2.Արա: 3.Նավթ: 4.Այրում: 5.Բու: 6.Ան: 7.Երուխան: 11.Ռիկոթի: 13.Թարթել: 14.Աթոռ: 15.Սա: 17.Նար: 18.Եր: 19.Սեդա: 21.Սմբատ: 25.Ռաբաթ: 27.Չարենց: 28.Իլ: 29.Բացատ: 30.Շեղլեց: 32.Շերամ: 36.Ելուզակ: 38.Լիմուզին: 40.Որակյալ: 41.Բարդի: 42.Աբել: 43.Արազ: 44.Տարազ: 46.Արենի: 49.Կտի: 53.Նա:


Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445